ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ,

Տեղեկացվում է Ձեզ, որ Արմավիրի մարզի «Ֆերիկի Ռ.Ռ. Օզմանյանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա 2021թ. ապրիլի 11-ին՝ ժամը 15:00-ին:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի №7 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 2 էջ:

<<Գեղակերտի միջնակարգ դպրոց>> և «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի նախագահ՝ ***Ա. Ղորղանյան***

04.03.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1-04242-2022
04.03.2022թ.

Արձանագրություն 7 04.03.2022

2022թ մարտի 4-ին կայացավ <<Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ –ի կառավարման միացյալ խորհրդի նիստը, մասնակցությամբ խորհրդի կազմի ութ անդամների: Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա էր նաև գործադիր տնօրեն՝ Լևոն Պողոսյանը

Օրակարգում՝ - 1. 04.03.2022 թվականին դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի համար մրցույթի հայտարարության կայացման և www axdarar.am կայքում տեղադրման հարցի քննարկում (հաղորդման կառավարման խորհրդի նախագահ Ա.Ղորղանյան):

Լսեցին.-1. <<Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ –ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի նախագահ ԱրշակՂորղանյանի զեկույցը:Նա ներկայացրեց, որ <<Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ –ի գործադիր տնօրեն՝ Լևոն Պողոսյանի պաշտոնավարման ժամկետը լրանում է 2022թվականի մարտի 20-ին:

Համաձայն ՀՀ կառավարության 2010թվի մարտի 4-ի N 319-ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 2-րդ կետի այն է հաստատության կառավարման կոլեգիալ մարմինը խորհուրդը տվյալ դպրոցի տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու հաշված առավելագույնը 70 աշխատանքային օր առաջ,բայց ոչ պակաս քան 66 աշխատանքային օր առաջ (չկիրառելով ամառային արձակուրդի օրեր,տոնական և ոչ աշխատանքային օրերի ժամանակահատվածը)ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում:

Ընդունելով վերոհիշյալը և նույն կարգի 3-րդ,4-րդ,5-րդ և ը-րդ կետերի դրույթները կառավարման խորհուրդը

ո ր ո շ ու մ է

1.<<Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ –ի տնօրենի պաշտոնի համար հայտարարել մրցույթ;

2. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունել www axdarar.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

3.Մրցույթն անցկացնել հայտերի ընդունման վերջին օրվանից հետո 10-րդ աշխատանքային օրը, ժամը 15.00-ին:

4.Խորհրդի որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

5.Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդների հայտերն ընդունել <<Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում և սույն գործնթացը վերապահել խորհրդի անդամ Լիդա Մակարյանին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ա.Ղորղանյան

քարտուղար՝ Լ.Մակարյան

Մրցույթի հայտարարություն

«Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

   1) ՀՀ քաղաքացիությունը.

   2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

   1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

   2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

   3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

   4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

   5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի մարտի 7-ից մինչև 2022 թվականի մարտի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի ապրիլի 11-ին՝ ժամը 15:00-ին,«Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Ֆերիկ, Բարեկամության 2:

Տեղեկությունների համար դիմել.

Հեռախոս՝ 093-72-57-59,093-63-76-56

Էլ. փոստ՝ ferikidproc@mail.ru: